ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (1926—1937)

ՎԻԿՏՈՐ ԴԱՎԼԱԹՅԱՆ

Ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման տարիներին ՀԿ (բ)Կ-ն զգալի աշխատանք կատարեց բանվոր դասակարգին պետական շինարարության ասպարեզ ընդգրկելու, նրա հասարակական-քաղաքական ակտիվության հետագա բարձրացման ուղղությամբ։ Բանվոր դասակարգին պետության կառավարմանը մասնակից դարձնելու քաղաքականության կենսագործման շնորհիվ ամրապնդվեց սովետների բանվորական միջուկը, նկատելիորեն աճեց բանվորների թիվը պետական ապարատում և հասարակական կազմակերպություններում։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանում հանրապետության բանվոր դասակարգը լայնորեն ներգրավված էր և ակտիվորեն մասնակցում էր նաև հասարակական կազմակերպությունների աշխատանքներին։ Դա կառավարման համակարգի հետ բանվոր դասակարգի կապն ամրապնդելու, դրա նկատմամբ պրոլետարական ազդեցությունն ապահովելու կոնկրետ արտահայտություններից ու կարևոր եղանակներից էր։

Բանվոր դասակարգին, աշխատավորական զանգվածներին պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու լավագույն դպրոցներից մեկը ՄՈՊՐ-ի (Международная организация помощи борцам революции) *հասարակական կազմակերպությունն էր, որի առաջին բջիջները Հայաստանում ստեղծվեցին 1923 թ.՝ Լենինականի բանվորների նախաձեռնությամբ[1]։ ՄՈՊՐ-ը մարմնավորում էր պրոլետարիատի միջազգային համերաշխության գաղափարը, իր ձայնն էր բարձրացնում ի պաշտպանություն ազատության ու սոցիալական հավասարության համար մարտնչող հեղափոխականների։ Սովետական Հայաստանի աշխատավորության ու հեղափոխական մարտիկների միջև հաստատվել էին սերտ փոխհարաբերություններ։ Դա իր արտահայտությունն էր գտնում արտասահմանյան բանտերում տառապող քաղբանտարկյալների օգտին կատարվող նվիրատվությունների, նամակագրական աշխույժ կապի, նրանց պաշտպանության համար կազմակերպվող զանազան կամպանիաների միջոցով՝ խնդիրներ, որոնք դարձել էին ՄՈՊՐ-ի գործունեության օղակները։ 1926 թ. Հայկական ՍՍՀ-ում գործում էր մոպրական 433 բջիջ (դրանք կազմակերպվում էին հիմնարկ-ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, սովխոզներում, դպրոցներում և այլն) 27.139 անդամով, իսկ 1935 թ.՝ 17.000 բջիջ 190.000 անդամով[2]։ Արագորեն աճեցին նաև արտադրական ձեռնարկություններում կազմակերպված բջիջների թիվը։ 1935 թ. գործում էին 250 այդպիսի բջիջներ 47.053 անդամով, այն դեպքում, երբ 1928 թ. համապատասխան ցուցանիշներն էին 71 և 6989[3]։*

Իրենց արդյունավետ աշխատանքով առանձնապես աչքի էին ընկնում Երևանի փայտամշակման, Կարբիդի, կաշվի, «Արարատ», մեխանիկական գործարանների ու տպարանի, Լենինականի տեքստիլի ու դեպոյի, Քանաքեռչինի,

---

1 «Կարմիր ֆրոնտ», 1935, № 2, էջ 8։

2 Նույն տեղում, Հայկական ՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ), ֆ. 342, ց. 1, գ. 106, թ. 13։

3 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 342, ց. 1, գ. 106, թ. 13, գ. 15, թ. 22։

Շամլուղի հանքերի մոպրական բջիջները[4]։ 1934 թ. Քանաքեռշինի 4 տեղամասերում կազմակերպված բջիջներում ներգրավված էր բանվորների 85%-ը։ Նրանց նախաձեռնությամբ անցկացված շաբաթօրյակների ու նվիրատվությունների միջոցով հեղափոխական մարտիկներին էր ուղարկվել 20.000 ռ.։ Բանվոր մոպրականները ստանձնել էին ինտերնացիոնալ մանկատան շեֆությունը՝ վերջինիս հատկացներով 2000 ռ., շինարարության տեղամասերում կազմակերպել էին Է. Թելմանի և Բ. Տորգլերի անվան արտադրական բրիգադներ, որոնք մշտապես գերակատարել էին պլանները[5]։ Հարկ է նշել, որ ձեռնարկությունների բջիջները ակտիվորեն մասնակցում էին պլանների կատարմանը։ Այսպես, 1932 թ. Լենինականի տրիկոտաժի գործարանի և մանարանի 4 մոպրական բրիգադները արտադրական բարձր ցուցանիշների համար արժանացան քաղսովետի փոխանցիկ դրոշին[6]։ 1934 թ. հանրապետությունում կազմակերպվել էր 946 մոպրական հարվածային բրիգադ՝ 34.000 անդամով, որոնք, կրելով հեղափոխական մարտիկների անունները, բարձր էին պահել իրենց կոչումը[7]։

Պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարների պրոպագանդման գործում շնորհակալ աշխատանք էին կատարում առանձին բանվոր մոպրականներ։ Արխիվային փաստաթղթերից մեկում բարձր է գնահատվում Երևանի կաշեգործարանի առաջավոր բանվոր, քաղսովետի դեպուտատ, ՍՍՌՄ-ի քաղկոմի նախագահության անդամ Մ. Քյաբաբչյանի գործունեությունը։ Հայրենադարձությունից առաջ նա Հունաստանում ակտիվորեն մասնակցել էր բանվորական շարժումներին և, սեփական փորձից գիտենալով պրոլետարական համերաշխության նշանակությունը, մայր հայրենիքում լծվել էր ՄՈՊՐ-ի գաղափարների պրոպագանդմանը։ ՄՈՊՐ-ի հարվածային կոչմանն արժանացած ակտիվիստի նախաձեռնությամբ ու ջանքերով մինչև 1931 թ. կազմակերպվել էր մոպրական 200 բջիջ՝ 25.000 անդամով, հեղափոխական մարտիկներին էր ուղարկվել 50.000 ռ., հանրապետության տարբեր շրջաններում նա հանդես էր եկել 2000 զեկուցմամբ[8]։

Հանրապետության մոպրական կազմակերպությունները նամակագրական սերտ կապի մեջ էին գտնվում հեղափոխական մարտիկների հետ։ Բանվորական կոլեկտիվների և մի շարք երկրների (Ավստրիա, Բուլղարիա, Գերմանիա, Սիրիա, ԱՄՆ, Ֆրանսիա և այլն) քաղբանտարկյալների, ինչպես նաև առանձին նշանավոր հեղափոխական գործիչների (Է. Թելման, Գ. Դիմիտրով, Խ. Դիաս, Թ. Մուն, Դ. Իբարուրի) միջև հաստատվել էին նամակագրական սերտ կապեր[9]։ Հանրապետության աշխատավորներն իրենց նամակներում համերաշխություն էին հայտնում հեղափոխական մարտիկների պայքարի գործին, նրանց տեղեկացնում սեփական հաջողությունների ու խնդիրների մասին, խոստանում անդուլ աշխատանքով բազմապատկել այն հասարակարգի հզորությունը, որի հաղթանակի համար իրենց երկրներում զենք էին բարձրացրել անկուն հեղափոխականները։ Վերջիններս, գոտեպնդվելով իրենց գաղափարների մարմնացումը հանդիսացող սոցիալիզմի երկրի հաջողություններով, վրճռականություն էին հայտնում պայքարելու հանուն ազատության ու անկախության։ Լենդեպոյի և կայարանի 3500 բանվորների ստորագրությամբ 1934 թ. Դուբինիայի (Բուլղարիա) քաղբանտարկյալներին ուղղված նամակում նշվում էր. «Մենք չենք կասկածում, որ Խորհրդային Միության պրոլետարիատի պայ-

---

4 «Կարմիր ֆրոնտ», 1934, № 7—8, էջ 16—17, 19, ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 342, ց. 1, գ. 31, թ. 18։

5 «Կարմիր ֆրոնտ», 1934, № 7—8, էջ 15։

6 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 342, ց. 1, գ. 31, թ. 18։

7 «Կարմիր ֆրոնտ», 1935, № 2, էջ 9։

8 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 342, ց. 1, գ. 9, թ. 49։

9 Մանրամասն տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 342, ց. 1, գ. 34, 52, 84 և այլն։

քարի փորձը դուք կօգտագործեք համաշխարհային Հոկտեմբերի համար։ Ավելի համառ ու շեշտակի պայքար պրոլետարիատի դիկտատուրայի համար։ Ձեր կողմից մեզ վրա դրված պարտավորությունները կկատարենք սոցիալիստական ստեղծագործական աշխատանքով»[10]։

Ալավերդու պղնձաձուլական կոմբինատի բանվորներին ուղղված նամակում, ուրախություն արտահայտելով մեր երկրի և հանրապետության նվաճումների համար, Սիրիայի քաղբանտարկյալներն իրենց վճռականությունն էին հայտնում շարունակելու հեղափոխական պայքարը[11]։ Սովետական Հայաստանի աշխատավորների և հեղափոխական մարտիկների միշև հաստատված նամակագրական սերտ կապի մասին է վկայում այն փաստը, որ միայն 1934 թ. մոպրական բջիջները նրանց ուղարկեցին 150 կոլեկտիվ նամակ[12]։ Ինչպես նշվեց, ՄՈՊՐ-ի գործունեության հիմնական խնդիրներից մեկն էլ արտասահմանյան քաղբանտարկյալների օգտին կատարվող նվիրատվությունների կազմակերպումն էր։ Այդ ուղղությամբ ևս հանրապետության մոպրականները զգալի աշխատանք էին կատարում։ Եթե 1926 թ. քաղբանտարկյալներին էր ուղարկվել 3451 ռ., ապա 1934 թ.՝ ավելի քան 270.000 ռ.։ Ընդհանուր առմամբ 1926—1934 թթ. հեղափոխական մտրտիկներին հանրապետության աշխատավորության ցույց տված նյութական օգնությունը կազմում էր մի պատկառելի գումար՝ մոտ 639.000 ռուբլի[13]։

Հանրապետության բանվոր դասակարգը, բոլոր աշխատավորներն իրենց համերաշխությունն էին հայտնում սոցիալական անարդարության ու բռնության դեմ մարտնչող անվեհեր մարտիկների գործին, հանդես գալիս ի պաշտպանություն մարդկային վեհ իդեալների ու գաղափարների։ Այդ տեսակետից բնորոշ էր նաև Սովետական Հայաստանի աշխատավորության վերաբերմունքը ամերիկյան 8 նեգր պատանիների ճակատագրի և ֆաշիզմի դեմ պայքարի ելած իսպանական հանրապետականների շարժման նկատմամբ։ 1932 թ. ի պաշտպանություն 8 անմեղ նեգրերի, որոնց ամերիկյան դատարանը դատապարտել էր մահվան, իրենց բողոքի հուժկու ձայնը բարձրացրին նաև հանրապետության աշխատավորները։ Մոպրական կազմակերպությունների գլխավորությամբ տեղի ունեցան մասսայական միտինգներ, որոնց մասնակցեց ավելի քան 100.000 մարդ[14]։ Միայն Կիրովականի քիմկոմբինատի, Զորագէսի, Անի-Պեմզայի, Արթիկ-Տուֆի և Լենտեքստիլի միտինգներում նրանց նկատմամբ իրենց համերաշխությունն արտահայտեցին 3500 բանվորներ[15]։

Ի պատասխան անմարդկային դատավճռի, մոպրականներն ավելի ակտիվացրին իրենց գործունեությունը։ Հանրապետության արտադրական ձեռնարկություններում կազմակերպվեց ՄՈՊՐ-ի անվան 50 հարվածային բրիգադ՝ 2000 բանվորներով, հեղափոխական մարտիկներին ուղարկվեց 82.000 ռուբլի, Ալավերդու № 4 հանքը կոչվեց 8 նեգրերի անվամբ[16]։ Երևանի «Արարատ» գործարանի բանվորները պարտավորվեցին հնգամյակը կատարել ժամկետից 7 ամիս շուտ և քաղբանտարկյալներին տալ իրենց մեկ օրվա աշխատավարձը[17]։

1936 թ. Իսպանիայի իրադարձությունների կապակցությամբ Սովետական Հայաստանում ևս տեղի ունեցան բազմամարդ միտինգներ ի պաշտպանու-

---

10 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 342, ց. 1, գ. 12, թ. 150։

11 «Կարմիր ֆրոնտ», 1934, № 7—8, էջ 9։

12 Նույն տեղում։

13 Նույն տեղում։

14 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1962, № 3, էջ 36։

15 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 342, ց. 1, գ. 25, թ. 25։

16 Նույն տեղում, գ. 26, թ. 48։

17 Նույն տեղում։

թյուն ֆաշիզմի դեմ հերոսաբար մարտնչող հեղափոխականների[18]։ Հանրապետության բանվոր դասակարգը, բոլոր աշխատավորները, արտահայտելով իրենց համերաշխությունն իսպանական ժողովրդի պայքարին, ցույց տվին նյութական օգնություն։ Միայն մեկ ամսում Լենինականի բանվորներն ուղարկեցին 5000 ռ.[19], իսկ Հոկտեմբերյանի բամբակազտիչ գործարանի բանվորուհիները Իսպանիայի կանանց ու երեխաների օգնության ֆոնդին մուծեցին 400 ռ.[20]։ Հանրապետության մոպրական կազմակերպությունների ջանքերով մինչև 1936 թ. սեպտեմբերը Հայաստանի աշխատավորությունը այդ ֆոնդին նվիրեց 144.400 ռ. (դրա մեջ չէր մտնում Իսպանիայի կանանց և երեխաների օգնության ֆոնդի գումարը)[21]։

Մոպրական կազմակերպությունների նախաձեռնությամբ հեղափոխական իրադարձությունների և նշանավոր առանձին հեղափոխական գործիչների տարելիցները տոնելու կամպանիաներն աշխատավորության շրջանում լայն մասսայականություն էին վայելում և միաժամանակ խթանում մոպրական աշխատանքների աշխուժացմանը։ 1937 թ. մարտին Փարիզի կոմունայի 34-րդ տարեդարձի կապակցությամբ հանրապետության արդյունաբերական հիմնական կենտրոններում՝ Երևանում, Լենինականում, Կիրովականում, Ալավերդիում և Ղափանում անցկացվեց 656 ժողով, որոնց մասնակցեց ավելի քան 65.000 մարդ, լույս տեսավ 403 պատի թերթ, ՄՈՊՐ-ի շարքերն անցավ 1400 մարդ[22]։ Տոնակատարության առթիվ գործարաններից հեղափոխական մարտիկներին էր ուղարկվել 25 կոլեկտիվ նամակ, բանվորները կազմակերպել էին Գ. Դիմիտրովի, Է. Թելմանի, Դ. Իբարուրու և Խ. Դիասի անվան արտադրական բրիգադներ, իսկ հեղափոխական այդ մարտիկներին ընտրել իրենց ձեռնարկությունների պատվավոր անդամ[23]։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հայաստանի մոպրական կազմակերպությունները զգալի աշխատանք կատարեցին աշխատավորության գաղափարաքաղաքական մակարդակը բարձրացնելու և պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու ուղղությամբ։ Հանրապետական ՄՈՊՐ-ը համարվում էր Միության լավագույն կազմակերպություններից մեկը։ Այն արժանացել էր ՄՈՊՐ-ի ավստրիական և գերմանական սեկցիաների դրոշներին, ՄՈՊՐ-ի ՍՍՀՄ Կենտկոմի պատվոգրին և իրավունք ստացել ՄՈՊՐ-ի համաշխարհային առաջին կոնգրես ուղարկել 2 պատգամավոր[24]։ Անշուշտ, մոպրական կազմակերպության այդ նվաճումների մեջ իրենց արժանի ավանդն ունեին նաև ձեռնարկությունների բջիջները, որոնց թիվը ՀՍՍՀ ՄՈՊՐ-ի Կենտկոմի հրահանգով 1935 թ. 250-ի փոխարեն 1936 թ. պետք է հասցվեր 400-ի[25]։ Դա մի անգամ ևս վկայում էր արտադրական ձեռնարկությունների մոպրական բջիջների աշխատանքի արդյունավետության, նրանց հեղինակության մասին։

Աշխատավորության շրջանում հակակրոնական պրոպագանդ ծավալելու գործում կարևոր դեր էր խաղում Մարտնչող անաստվածների միության (ՄԱՄ) կամ «Անաստված» հասարակական կազմակերպությունը, որի առաջին խմբակները Հայաստանում ստեղծվեցին 1928 թ. վերջում։ Այդ ժամանակ կազմակերպվեց ՄԱՄ-ի 400 խմբակ, որտեղ ընդգրկված էր ավելի քան 10.000

---

18 Մանրամասն տե՛ս «Խորհրդային Հայաստան», 18, 24. IX, 5. X. 1936, «Коммунист», 23. IX. 1936, ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 65 ց. 5, դ. 1200 և այլն։

19 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 342, ց. 1, դ. 95, թ. 8։

20 «Խորհրդային Հայաստան», 4. X. 1936։

21 «Խորհրդային Հայաստան», 24. IX. 1936։

22 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 342, ց. 1, դ. 137, թ. 7։

23 Նույն տեղում, դ. 133, թ. 104։

24 «Կարմիր ֆրոնտ», 1934, № 7—8, էջ 4—5։

25 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 342, ց. 1, դ. 106, թ. 32,

մարդ[26]։ Բանվոր դասակարգի աթեիստական դաստիարակության ուղղությամբ գգալի աշխատանք էին կատարում արտադրական ձեռնարկությունների ու օբյեկտների «Անաստվածի» բջիջները, որոնց թիվը 1929 թ. հասնում էր 138-ի՝ 3150 անդամով[27]։ Նրանց ձեռնարկած բացատրական լայն աշխատանքի շնորհիվ բանվորության մեջ սկսվեց մասսայական հակակրոնական շարժում, որի արտահայտություններից մեկը եղավ կրոնական մի շարք տոների համատարած բոյկոտումը։ 1929 թ. Ալավերդու և Շամլուղի պղնձահանքերի 500 բանվորներ չտոնեցին հունվարի 6-ը («Քրիստոսի ծննդյան օրը») և դուրս եկան աշխատանքի, իսկ Ղափանի հանքափորները միջնորդեցին պետմարմիններին՝ համապատասխան օրենքի միջոցով այդ օրը դարձնել աշխատանքային[28]։ Հատկանշական է, որ հունվարի 6-ի հանգստյան օրը հանրապետության բոլոր արտադրական ձեռնարկություններն աշխատեցին[29]։ Բանվոր դասակարգն առաջնորդվելով «Կրոնի հիմքերը ոչնչացնելու համար մենք զարկ կտանք սոցիալիստական արդյունաբերությանը» լոզունգով՝ նման ձևով «տոնեցին» նաև ապրիլի 1-ը (քրիստոնեական զատկի 2-րդ օրը)։ Երևանի տպարանի բանվորները որոշել էին ապրիլի 1-ին դուրս գալ աշխատանքի, ստանձնել աշխատանքային բարձր պարտավորություններ, բոլոր աշխատողներին ընդգրկել «Անաստվածի» խմբակում և ավելի աշխուժացնել նրա աշխատանքը[30]։ Չնայած հանրապետության աշխժողկոմատը ապրիլի 1-ը հայտարարել էր առանձին հանգստյան օր, սակայն բանվորական բազմաթիվ կոլեկտիվներ առաջարկել էին վերանայել այդ որոշումը[31]։ Աթեիստական աշխատանքների աշխուժացման շնորհիվ հայ աշխատավորության կենցաղում կրոնական տոների փոխարեն մուտք գործեցին ու աստիճանաբար արմատավորվեցին նոր տոներ՝ Մայիսի 1-ը, Նոյեմբերի 7-ը, Փետրվարի 23-ը և այլն։

Բանվորական խավերի աթեիստական դաստիարակության գործում իրենց օրինակելի աշխատանքով աչքի էին ընկնում Երևանի տպարանի, մեխանիկական և «Արարատ» գործարանների, Ալավերդու հանքերի, Լենտեքստիլի և արտադրական այլ ձեռնարկությունների ՄԱՄ-ի բջիջները[32]։ Ուշագրավ էր Երևանի տպարանի 130 հոգուց բաղկացած բջջի 1933 թ. գործունեությունը։ Նրա նախաձեռնությամբ ցուցադրվել էր հակակրոնական 7 կինոնկար և բեմադրվել մեկ պիես, հաճախակի կազմակերպվել էին աթեիստական թեմաներով զեկուցումներ, կատարվել էր 35 զանազան քիմիական փորձ։ «Անաստվածի» խմբակը կազմարարական արտադրամասում ուներ 12 հոգուց բաղկացած բրիգադ, որը պլանները պարբերաբար գերակատարելու համար արժանացել էր փոխանցիկ դրոշի[33]։

Մասսայական աթեիզմի զարգացման գործին ակտիվորեն մասնակցում էին արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունները, որոնց նախաձեռնությամբ լայն աշխատանք էր կատարվում հատկապես գյուղական վայրերում։ Հակակրոնական պրոպագանդայի և կրոնական գաղափարայնության դեմ մղվող պայքարում կարևոր էր գյուղ մոբիլիզացվող բանվորների դերը։ Ավելի գիտակից և քաղաքականապես հասուն բանվորները գյուղացիության շրջանում հակակրոնական թեմաներով զրույցներ ու զեկուցումներ էին անցկացնում, լույս էին ընծայում պատի հատուկ թերթեր, որտեղ ցույց էր

---

26 Գ. Ա. Արծրունի, Մասսայական աթեիզմի զարգացումը Հայաստանում (1920—1930), Երևան, 1982, էջ 21, «Ավանգարդ», 11. XI. 1928։

27 «ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետու նյութեր 6-րդ համագումարին», Երևան, 1929, էջ 133։

28 «Խորհրդային Հայաստան», 4. I. 1929։

29 Նույն տեղում, 6. I. 1929։

30 Նույն տեղում, 29. III. 1929։

31 Նույն տեղում։

32 «Անաստվածը», 8. X, 28. XI. 1933։

33 Նույն տեղում։

տրվում կրոնական հավատալիքների սնանկությունը[34]։ Բանվորական լայն խավերի աթեիստական դաստիարակության համար կարևոր նշանակություն ունեին արհմիութենական կազմակերպությունների նախաձեռնությամբ հաճախակի անցկացվող հակակրոնական շաբաթները։ 1929 թ. Երևանի բանվորական ակումբում տեղի ունեցած հակակրոնական շաբաթվա ընթացքում, որին մասնակցեց ավելի քան 42.000 մարդ, ցուցադրվեցին հակակրոնական բնույթի կինոնկարներ ու ներկայացումներ, կարդացվեցին աթեիստական թեմաներով զեկուցումներ, դրվեցին բազմաթիվ քիմիական փորձեր[35]։

Աշխատավորական մասսաների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում կարևոր դեր էր խաղում Պաշը-Ավիաքիմի հասարակական կազմակերպությունը, որի հիմնական խնդիրը սոցիալիստական հայրենիքի պաշտպանության գործին նպաստելն էր։ Արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունների համագործակցությամբ ու լայն օժանդակությամբ Պաշը-Ավիաքիմն առանց արտադրությունից կտրվելու պատրաստում էր հրաձիգներ, օդաչուներ, պարաշյուտիստներ և այլ մասնագետներ, մասսաներին հաղորդակից էր դարձնում զինվորական գիտելիքներին։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանում հանրապետության հիմնարկ-ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, սովխոզներում, զինվորական մասերում և դպրոցներում լայն տարածում ստացան Պաշը-Ավիաքիմի բջիջները։ Եթե 1928 թ. գործում էին այդպիսի 716 բջիջներ՝ 33.296 անդամով[36], ապա 1931 թ.՝ 1006 բջիջ 81.517 անդամով[37]։ 1933 թ. Սովետական Հայաստանի Պաշը-Ավիաքիմի կազմակերպությունը միավորում էր ավելի քան 140.000 մարդ[38]։ Բանվոր դասակարգի ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ զգալի աշխատանք էին կատարում արտադրական ձեռնարկություններում գործող կազմակերպությունները։ Դրանց գործունեությունն ավելի բարձր հիմքերի վրա դնելու համար կարևոր նշանակություն ունեցան ՀԿ(բ)Կ VI համագումարի որոշումները[39]։ 1929 թ. մարտին կայացած Պաշը-Ավիաքիմի հանրապետական II համագումարն ընդգծեց, որ «առանձին ուշադրություն պետք է դարձնել մեր գլխավոր արդյունաբերական կենտրոններում աշխատանքների աշխուժացման վրա»[40]։ 1931 թ. Հայկական ՍՍՀ-ում գործում էր Պաշը-Ավիաքիմի 72 գործարանային բջիջ, ուր ընդգրկված էր 2155 բանվոր[41]։

Բազմաթիվ էին բանվորական լայն մասսաների շրջանում ռազմահայրենասիրական արդյունավետ աշխատանք կատարող Պաշը-Ավիաքիմի կազմակերպությունները։ «Խորհրդային Հայաստանը» բարձր էր գնահատում Երևանի մի շարք ձեռնարկությունների բջիջների գործունեությունը։ Թերթը նշում էր, որ «մայրաքաղաքի բազմաթիվ ձեռնարկություններում Պաշը-Ավիաքիմի կազմակերպությունները գործնական, ծավալուն աշխատանքի են անցել։ Կաուչուկշինում, պահածոների, ձեթ-օճառի, մարմարի և «Արարատ» գործարաններում կանոնավոր գործում են «վորոշիլովյան հրաձիգների», հակաօդային և այլ խմբակներ»[42]։ Քիչ չէին նաև Պաշը-Ավիաքիմի բջիջների բանվոր ղեկավարների լավ աշխատանքի օրինակները, որը կարևոր նշանակություն ուներ բջիջների գործունեության արդյունավետության բարձրացման համար։ Այսպես, 1931 թ. Լենինականի տեքստիլ գործարանի բջջի քարտուղարն էր բանվոր

---

34 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 65, ց. 5, գ. 338, թ. 83։

35 «Խորհրդային Հայաստան», 3. IV. 1929։

36 «ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետու նյութեր 6-րդ համագումարին», էջ 132։

37 «Խորհրդային Հայաստան», 15. I. 1931։

38 Նույն տեղում, 14. X. 1937։

39 «ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետու նյութեր 6-րդ համագումարին», էջ 132։

40 «Խորհրդային Հայաստան», 26. III. 1929։

41 Նույն տեղում, 15. I. 1931։

42 Նույն տեղում, 20. IV. 1936։

Ն. Դադայանը, որի «լավ աշխատանքի շնորհիվ բջիջը քաղաքում համարվում էր ամենաօրինակելին»[43]։

ՀԿ(բ)Կ XI համագումարը (1938 թ.) բարձր գնահատեց աշխատավորության շրջանում Պաշը-Ավիաքիմի ծավալած ռազմահայրենասիրական գործունեությունը[44]։ Պաշը-Ավիաքիմի կազմակերպությունները մինչև Հոկտեմբերյան հեղափոխության 20-րդ տարեդարձը երկրին տվել էին 22 հրահանգիչ օդաչու, 90 սավառնորդ օդաչու, 35 պարաշյուտիստ-դեսանտային, 141 առաջին կարգի պարաշյուտիստ։ Միայն 1938 թ. սկզբում պատրաստվել էր 1528 «վորոշիլովյան հրաձիգ», ՀՕՔՊ-ի՝ «Պատրաստ հակաօդային և հակաքիմիական պաշտպանության» նորմաները հանձնել էր 15.807 մարդ[45]։

Աշխատավորության շրջանում ռազմահայրենասիրական աշխատանքներ ծավալելու կարևոր եղանակներից մեկն էլ բանակի և մասսաների կապն ամրապնդելն էր, որի անհրաժեշտությունն ու խոշոր նշանակությունը բազմիցս ընդգծել է Վ. Ի. Լենինը։ Այդ բնագավառում ևս բանվոր դասակարգն ընթանում էր առաջամարտիկների շարքերում։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Սովետական Հայաստանում ևս արտադրական ձեռնարկությունները բանակային ստորաբաժանումների նկատմամբ շեֆական աշխատանք էին կատարում։ Նշելով այդ գործում ձեռք բերված հաջողությունների մասին, ՀԿ(բ)Կ VI համագումարը տեղական կազմակերպությունների առջև խնդիր դրեց ավելի աշխուժացնել հետագա աշխատանքները[46]։ 1934 թ. հանրապետությունում գտնվող կարմիր բանակի զորամասերի ու ստորաբաժանումների նկատմամբ շեֆություն էր ստանձնել 17 արդյունաբերական ձեռնարկություն[47]։

Բանվորական լայն խավերի և կարմիրբանակայինների կապն ամրապնդելու գործում մեծ էր հատկապես արհմիությունների դերը։ Նրանց հետևողական աշխատանքի շնորհիվ շեֆ ձեռնարկությունները պարբերաբար այցելում էին բանակայիններին, ծանոթանում նրանց կենցաղին, հաճախակի կազմակերպում կուլտուրական և սպորտային զանազան միջոցառումներ, ցույց տալիս բազմապիսի օգնություն։ Իրենց հերթին մարտիկները հյուրընկալվում էին արտադրական ձեռնարկություններում, ծանոթանում նրանց աշխատանքին. բանվորներին սովորեցնում էին ռազմական գործը։ Երևանի մեխանիկական գործարանի բանվորները 1934 թ. ընթացքում պարբերաբար փոխայցելություններ էին կազմակերպել ենթաշեֆ գնդի մարտիկների հետ։ Բանվորները զինվորական գրադարանին էին նվիրել 1200 ռ. գրականություն, նորոգել 120 միավոր զենք, նրանց օժանդակել էին կուլտուր-կենցաղային հարցերում, կարմիր բանակի ստեղծման 16-րդ տարեդարձի առթիվ ծառայության մեջ այլի ընկնող մի խումբ զինվորների ու հրամանատարների պարգևատրել էին 300 ռ. արժողությամբ նվերներով, իսկ զորամասին նվիրել 1200 ռուբլի։ Իրենց հերթին կարմիրբանակայինները մի քանի անգամ եղել էին գործարանում և բանվորների ռազմական գիտելիքները հարստացնելու նպատակով կազմակերպել 2 խմբակ[48]։ Իրենց կապն ավելի ամրապնդելու նպատակով ձեռնարկությունների և ենթաշեֆ զորամասերի միջև կնքվում էին սոցմրցման պայմանագրեր, որոնցով ստանձնած պարտավորությունները կողմերը որպես կանոն կատարում էին[49]։ Շեֆական աշխատանքներն ավելի բարձր հիմքերի վրա դնելու համար կարևոր նշանակություն ունեին արհմիությունների նախաձեռնությամբ պարբերաբար անցկացվող «կարմիր զորանոցներին» ստուգատեսները։ 1929 թ. մարտին տեղի ունեցած ստուգատեսի ընթացքում ՀԱՄԽ-ի բոլոր միու-

43 Նույն տեղում, 15. XI. 1931։

44 Նույն տեղում, 6. VI. 1938։

45 Նույն տեղում։

46 «ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետու նյութեր 6-րդ համագումարին», էջ 138։

47 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 65, ց. 5, գ. 1116, թ. 2։

48 Նույն տեղում, թ. 13—14։

49 Նույն տեղում, թ. 24—25։

թյունները մասսայական այցելություններ էին կազմակերպել դեպի զորամասերը։ Հանրապետության ավելի քան 85 բանվորական կոլեկտիվներ հյուրընկալվել էին կարմիրբանակայիններին, անց էին կացվել միացյալ ժողովներ, բանվորները մարտիկներին ցույց էին տվել բազմապիսի օգնություն[50]։ Բարձր գնահատելով ստուգատեսի նշանակությունը, «Խորհրդային Հայաստանը» գրում էր, «որ արհմիությունների կատարած կոնկրետ աշխատանքը զգալի չափով նպաստեց բանակի հետ ունեցած կապի ամրապնդմանը»[51]։

Հանրապետության բանվոր դասակարգը հարուստ փորձ ուներ սոցիալիստական հայրենիքի պաշտպանունակության ամրապնդմանը ակտիվորեն մասնակցելու և ինքնուրույն նախաձեռնություններով հանդես գալու գործում։ Այդ տարիներին բանվորական կոլեկտիվներում տարածում ստացավ ռազմական տեխնիկայի պատրաստման միջոցներ հավաքելու հայրենասիրական շարժումը։ 1932 թ. Երևանի կայարանի բանվորները հանրապետության աշխատավորությանը կոչ արեցին ստեղծել «Երևանի հարվածային օդանավի» կառուցման ֆոնդ և առաջինը մուծեցին 1000 ռ.[52]։ Երկաթուղայինների մրցահրավերին առաջինն արձագանքեցին տպարանի բանվորները, որոնք նվիրեցին 630 ռ.[53]։ Ավիացիայի շինարարության ֆոնդին միջոցներ հատկացնելուց բացի բանվոր դասակարգը հանդես էր գալիս նաև այլ նախաձեռնություններով։ 1931 թ. արտադրական կոլեկտիվները Պաչը-Ավիաքիմի կազմակերպությունների հետ միասին ստանձնեցին հանրապետության օդանավակայանների ու վայրէջքի հրապարակների շեֆությունը, զգալի ավանդ մուծեցին թռիչքների անվտանգությունն ապահովելու գործում[54]։ Որոշակի էր նաև բանվորության դերը աերոակումբների գործունեությունը բարձր հիմքերի վրա դնելու ասպարեզում։ «Коммунист»-ը բարձր էր գնահատում «Արարատ», պահածոների, ձեթ-օճառի և սինթետիկ կաուչուկի գործարանների ցույց տված բազմակողմանի օգնությունը Երևանի աերոակումբի աշխատանքին[55]։

Բանվոր դասակարգի ռազմահայրենասիրական դաստիարակության գործում կարևոր էր նաև ֆիզկուլտուրայի և սպորտի նշանակությունը։ Հանրապետության ֆիզկուլտուրային կազմակերպությունները որոշակի հաջողությունների հասան բանվորական լայն խավերին ֆիզկուլտշարժման մեջ ընդգրկելու գործում։ 1930 թ. հանրապետությունում գործող 40 խմբակներում ներգրավված էր 5880 ֆիզկուլտուրնիկ, որոնցից 4346-ը կամ 74%-ը բանվորներ էին, իսկ մեկ տարի անց 220 խմբակներում ընդգրկված 15.000 ֆիզկուլտուրնիկներից բանվորներ էին 13.000 կամ 86%-ը[56]։ Այդ փաստը ՀԱՄԽ-ի VII համագումարը (1932 թ.) գնահատեց որպես «արհմիութենական ֆիզկուլտշարժման զգալի նվաճում»[57]։

Բարձր գնահատելով հանրապետության արհմիութենական ֆիզկուլտուրային կազմակերպության ձեռքբերումները, «Երիտասարդ բոլշևիկն» ընդգծում էր, որ «նա իր աշխատանքի անմիջական առանցքն է դարձրել և զբաղվել է գլխավորապես բանվորների ֆիզիկական դաստիարակության, նրանց ֆիզկուլտուրայի մեջ ընդգրկելու գործով»[58]։ Աշխատավորության շրջանում մասսայական ֆիզկուլտուրայի ծավալման մասին էր վկայում այն փաստը, որ 1935 թ. հանրապետությունում հաշվվում էր ավելի քան 75.000 կազմակերպված ֆիզկուլտուրնիկ[59]։

---

50 «Խորհրդային Հայաստան», 10. III. 1929։
51 Նույն տեղում։
52 Նույն տեղում, 10. III. 1932։
53 Նույն տեղում։
54 Նույն տեղում, 29. VII. 1931։
55 «Коммунист», 18. VIII. 1937։
56 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 5, դ. 282, թ. 29—30, ց. 2, գ. 1071; թ. 168։
57 Նույն տեղում, ց. 2, գ. 1071, թ. 58։
58 «Երիտասարդ բոլշևիկ», 1933, № 2, էջ 52։
59 «Խորհրդային Հայաստան», 12. VII. 1935։

Ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացման ասպարեզում ձեռք բերված հաջողությունները իրենց արտահայտությունն էին գտնում նաև ժողովրդական տնտեսության բնագավառում։ Դրանք վերջին հաշվով նպատակաուղղվում էին սոցիալիստական շինարարության վերելքին։ Այդ տեսակետից աչքի էին ընկնում Ալավերդու, Լենհանքերի, Լենտեքստիլի ու դեպոյի, մանածագործարանի, Արարատի ցեմենտի գործարանի և այլ կազմակերպություններ, որոնց կազմակերպած ֆիզկուլտուրային հարվածային բրիգադները մշտապես գերակատարում էին արտադրական պլանները։ Իր օրինակելի աշխատանքի համար Ալավերդու Լենհանքերի ֆիզկազմակերպությունը 1933 թ. անցկացված միութենական ստուգատեսում արժանացել էր հատուկ մրցանակի[60]։ Ֆիզկուլտշարժումն արտադրության խնդիրներին շաղկապելու ուղղությամբ ձեռք բերված հաջողությունների մասին էր վկայում նաև այն փաստը, որ 1931 թ. հանրապետության արտադրական ձեռնարկություններում սոցմրցման մեջ էր ընդգրկված ավելի քան 9700 ֆիզկուլտուրնիկ[61]։

Աշխատավոր երիտասարդությանը ֆիզկուլտշարժման մեջ ընդգրկելու հիմնական եղանակներից մեկը ՊԱՊ համալիրի նորմաների հանձնումն էր։ Այդ գործում հանրապետության ֆիզկուլտուրային կազմակերպությունը Միության մեջ համարվում էր լավագուններից մեկը[62]։ 1934 թ. ՊԱՊ-ի կրծքանշանակիրներ էին դարձել 30.000[63], իսկ 1938 թ. ավելի քան 65.000 կոմերիտականներ ու արտամիութենական երիտասարդներ[64]։ Նրանց շարքերում լայնորեն ընդգրկված էր նաև բանվոր դասակարգի երիտասարդ հերթափոխը։

Այսպիսով, փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում հանրապետության բանվոր դասակարգն իր ներկայացուցչությունն ուներ հասարակական կազմակերպություններում։ Ակտիվորեն մասնակցելով ՄՈՊՐ-ի, ՄԱՄ-ի և Պաչը-Ավիաքիմի աշխատանքներին, բանվորները ձեռք էին բերում պետության կառավարման ունակություններ ու փորձ, լայնորեն դրսևորում իրենց ստեղծագործական կարողությունները։

ДЕЯТЕЛЬНОСТЬ РАБОЧЕГО КЛАССА СОВЕТСКОЙ АРМЕНИИ В ОБЩЕСТВЕННЫХ ОРГАНИЗАЦИЯХ (1926—1937)

ВИКТОР ДАЛЛАКЯН

Резюме

В период построения социализма задача оживления деятельности общественных организаций, вовлечения в них широких масс находилась в центре внимания КП(б)А. Для дальнейшего повышения общественно-политической активности рабочего класса, его привлечения в управление государством важное значение имело также все более широкое участие рабочих в работе общественных организаций. Массовое вовлечение рабочих в МОПР, СВБ и Осоавиахим и развернутая ими многосторонняя деятельность не только способствовали повышению эффективности работы этих организаций, но и имели важное значение для укрепления связи рабочего класса с системой управления, усиления пролетарского влияния на нее.

---

60 Նույն տեղում, 18. IX. 1934, «Երիտասարդ բոլշևիկ», 1933, № 2, էջ 52։

61 «Երիտասարդ բոլշևիկ», 1933, № 2, էջ 52։

62 Նույն տեղում, 1933, № 9—10, էջ 44։

63 «Ավանգարդ», 18. IX. 1934։

64 «Комсомольская правда», 12. VI. 1938.